ՎԴ/1625/05/21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021 թվականի հուլիսի 16-ին քաղաք Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի Ռուբեն Հայրապետյանի՝ ընդդեմ ՀՀ Կառավարության՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի ընտրության արդյունքները հաստատելու մասին ՀՀ Կառավարության՝ 2020 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 2131-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ ՎԴ/1625/05/21 գործով ենթակայության մասին վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի հունիսի 28-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Ռուբեն Հայրապետյանի ներկայացուցիչը 2021 թվականի փետրվարի 22-ին հայցադիմում է ներկայացրել Վարչական դատարան՝ ընդդեմ ՀՀ Կառավարության, որով պահանջել է անվավեր ճանաչել ՀՀ Կառավարության՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի ընտրության արդյունքները հաստատելու մասին 2020 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 2131-Ա որոշումը:

2. Վարչական դատարանի՝ 2021 թվականի մարտի 3-ի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է:

3. Վերաքննիչ վարչական դատարանի՝ 2021 թվականի ապրիլի 30-ի որոշմամբ Ռուբեն Հայրապետյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է և Վարչական դատարանի՝ «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» 2021 թվականի մարտի 3-ի որոշումը վերացվել է:

4. Վարչական դատարանը (դատավոր՝ Մ.Մելքումյան) 2021 թվականի հունիսի 9-ին որոշում է կայացրել հայցադիմումը վերահասցեագրելու մասին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *««Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի ընտրության արդյունքները հաստատելու գործառույթը վերապահված է Հայաստանի Հանրապետությանը, որն այդ իրավահարաբերություններում հանդես է գալիս որպես այդ իրավաբանական անձի հիմնադիր և գործում է ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության: (...) տվյալ դեպքում ՀՀ կառավարությունը, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի ընտրության արդյունքները հաստատելու գործառույթն իրականացնելիս, գործել է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության հիման վրա՝ որպես իրավաբանական անձի հիմնադիր:*

Նման պայմաններում դատարանը գտնում է, որ վիճելի իրավահարաբերության բովանդակությունը կազմում է ոչ թե ՀՀ վարչապետի՝ իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, այլ իրավաբանական անձի կառավարման մարմնի ձևավորման իրավասությունը, այսինքն՝ իրավահարաբերությունը կրում է մասնավոր բնույթ»:

5. Թիվ ՎԴ/1625/05/21 գործը 2021 թվականի հունիսի 15-ին մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հ. Զարգարյանին:

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Հ. Զարգարյան), 2021 թվականի հունիսի 28-ի որոշմամբ գործի ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու նպատակով գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(...) Դատարանը հանգում է այն*

եզրակացության, որ «Պահանջն ըստ ընդդատության վերահասցեագրելու մասին» ՀՀ վարչական դատարանի (նախագահությամբ Մ.Մելքումյանի) 2021 թվականի հունիսի 9-ի որոշմամբ, որն ամբողջությամբ վերաբերում է վիճարկվող խնդրո առարկա ՀՀ կառավարության որոշման հիմքերին, հաշվի չի առնվել այն իրողությունը, որ Վարչական դատարան ներկայացված հայցի առարկան է բացառապես վարչական ակտի իրավաչափության վիճարկումը, իսկ պետական ոչ առևտրային կազմակերպության իրավաբանական անձի կարգավիճակ ունենալու և նրա՝ ռեկտորի ընտրության կազմակերպման գործընթացը՝ որպես իրավաբանական անձի կողմից իրականացվող գործընթաց, տվյալ դեպքում էական նշանակություն չունի, քանի որ հայցվորի կողմից արդեն իսկ քաղաքացիական իրավահարաբերություններից բխող և ՀՀ կառավարության թիվ 2131-Ա որոշման հիմքերի և իրավաբանական անձի կողմից իր գործառույթներին վերաբերող գործընթացները վիճարկվում են քաղաքացիական գործերով հարուցված հայցադիմումների շրջանակներում:

Հետևաբար, սույն հայցադիմումը Վարչական դատարան ներկայացնելով և ստանալով վերադաս դատական ատյանի որոշումը՝ քաղաքացին որպես դատական պաշտպանության եղանակ ակնկալում է արդյունավետ միջոցի կիրառում Վարչական դատարանի կողմից, քանի որ այլ քաղաքացիական գործերով վերջինս արդեն իսկ իրացրել է իր դատական պաշտպանության իրավունքը:

Սույն գործով ներկայացված հայցը վերաբերում է ոչ թե ՀՀ կառավարության թիվ 2131-Ա որոշման կայացման հիմքերին, այլ բուն վարչարարությանը և ՀՀ կառավարության կողմից ռեկտորի ընտրությունների արդյունքները հաստատելու մասին որոշման կայացման գործառույթին, ինչն ինքնին ՀՀ կառավարության՝ օրենքով վերապահված լիազորությունն է, որն իրականացվում է վարչարարության արդյունքում, վերաբերում է հանրային իրավահարաբերություններին»:

7. Թիվ ՎԴ/1625/05/21 վարչական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2021 թվականի հուլիսի 9-ին:

Ենթակայության մասին վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը.

8. ՀՀ Կառավարությունը 2020 թվականի դեկտեմբերի 22-ին որոշում է ընդունել՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային

կազմակերպության ռեկտորի պաշտոնում Դիանա Գալոյանի ընտրության արդյունքները հաստատելու մասին:

Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի ընտրության արդյունքները հաստատելու մասին ՀՀ Կառավարության՝ 2020 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 2131-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջը բխում է հանրային, թե՞ մասնավոր իրավահարաբերություններից:*

10. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

11. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:*

2. Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (…) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի: (…)»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

12. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ*

հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության»:

13. Սույն որոշման 9-11-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերի քննությունը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերից ծագող գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ օրենսդիրը վարչական դատարանի ընդդատության և առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի ենթակայության կանոնների խախտման դեպքում նախատեսել է տարբեր իրավաբանական հետևանքներ:

Այսպես՝ ի տարբերության քաղաքացիական դատավարության, որտեղ ենթակայության կանոնների խախտումը հայցադիմումի ընդունելության փուլում հանգեցնում է հայցադիմումի ընդունումը մերժելուն, վարչական դատավարությունում հայցվորի կողմից ընդդատության կանոնները չպահպանելու հետևանքը հայցադիմումը վերահասցեագրելու՝ վարչական դատարանի լիազորության կիրառումն է: Վերոգրյալ կարգավորումների տարբերությունը պայմանավորված է վարչական արդարադատության առանձնահատկություններով, մասնավորապես՝ վարչական դատավարությունում դատարանի ակտիվ դերակատարմամբ:

Այսպիսով, յուրաքանչյուր դեպքում վարչական դատարանը պարտավոր է պարզել՝ արդյոք կոնկրետ գործն ընդդատյա է (ենթակա է) տվյալ դատարանին, թե՝ ոչ, և նշված հարցի կապակցությամբ բացասական եզրահանգում կատարելու դեպքում պարտավոր է հայցադիմումը վերահասցեագրել ըստ ընդդատության: Նույն իրավիճակում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը պարտավոր է դրա ընդունումը մերժել՝ գործը քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա չլինելու հիմքով:

14. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին մանրամասն անդրադարձ է կատարվել Վճռաբեկ դատարանի՝ *«Վեսպ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ*

էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ[1]:

15. Սույն գործով վիճելի իրավահարաբերության բնույթը պարզելու համար անհրաժեշտ է վերլուծել պետական ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման հարաբերությունները կարգավորող իրավական նորմերը:

16. Այսպես՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Պետական կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որն ստեղծվում է միայն մշակույթի, առողջապահության, սոցիալական, սպորտի, կրթության, գիտության, բնապահպանական և ոչ առևտրային այլ բնագավառներում գործունեություն իրականացնելու նպատակով»:*

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Պետական կազմակերպության հիմնադիր (...) կարող է հանդիսանալ միայն Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս կառավարության»:*

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Պետական կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը (տնօրեն, նախագահ, ռեկտոր և այլն)»:*

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Պետական կազմակերպության հիմնադիրն ունի պետական կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ նույն օրենքով նախատեսված դեպքերի»:*

17. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Բարձրագույն ուսումնական հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ուսումնական հաստատության գործադիր մարմինը՝ ռեկտորը: (...) Ռեկտորի ընտրության արդյունքները հաստատում է հիմնադիրը»:*

18. ՀՀ Կառավարության՝ 2005 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 1718-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

---

[1] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 որոշումը:

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 1-ին կետի համաձայն՝ *«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը (…) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ձեռք է բերում և իրականացնում նույն կանոնադրությամբ ամրագրված՝ իր խնդիրների կատարման համար անհրաժեշտ իրավունքներ ու պարտականություններ»:*

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 3-րդ կետի համաձայն՝ *«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության»:*

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 23-րդ կետի համաձայն՝ *«Համալսարանի ընթացիկ ղեկավարումն իրականացնում է ռեկտորը (…)»:*

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 25-րդ կետի համաձայն՝ *«(…) Ռեկտորի ընտրության արդյունքները հաստատում է հիմնադիրը» (…):*

19. Սույն որոշման 15-17-րդ կետերում վկայակոչված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության Կառավարության: Ընդ որում, հարկ է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս ՀՀ Կառավարության, որպես «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հիմնադիր, ունի համալսարանի գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք: Վերոգրյալից բխում է, որ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեությանը և կառավարմանն առնչվող հարցերով որոշումներ ընդունելիս Հայաստանի Հանրապետությունն՝ ի դեմս ՀՀ Կառավարության, հանդես չի գալիս որպես հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ և նման որոշումների ընդունումը չի բխում ՀՀ Կառավարության կողմից իր հանրային իշխանական

լիազորությունների իրականացման պարտականությունից, քանի որ տվյալ դեպքում Հայաստանի Հանրապետությունը ՀՀ Կառավարության միջոցով իրականացնում է ոչ թե որպես վարչական մարմնի, այլ որպես իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող պետական ոչ առևտրային կազմակերպության հիմնադրի պարտականությունները, ինչը ներառում է նաև ռեկտորի ընտրության արդյունքները հաստատելու իրավասությունը: Ուստի նշված իրավազորության իրականացումը կապված չէ ՀՀ Կառավարության հանրային-իշխանական (գործադիր-կարգադրիչ) գործառույթների իրականացման հետ:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ Կառավարությունը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջին համապատասխան՝ 2020 թվականի դեկտեմբերի 22-ին որոշում է ընդունել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի պաշտոնում Դիանա Գալոյանի ընտրության արդյունքները հաստատելու մասին:

21. Վերոհիշյալ փաստական հանգամանքի և սույն որոշման 19-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշման համադրված վերլուծությունից հետևում է, որ թեև «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի ընտրության արդյունքները հաստատելու մասին 2020 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 2131-Ա որոշումն ընդունվել է ՀՀ Կառավարության՝ գործադիր իշխանության բարձրագույն մարմնի կողմից, այդուհանդերձ, այդ հարաբերություններում վերջինս չունի օրենքով սահմանված իշխանական լիազորություններ իրականացնելու պարտականություն, այլ իրացնում է պետական ոչ առևտրային կազմակերպության հիմնադրի իրավունքներն ու պարտականությունները:

Վերոգրյալի հաշվառմամբ, նկատի ունենալով, որ սույն գործով Ռուբեն Հայրապետյանի և ՀՀ Կառավարության միջև ծագած իրավական վեճը բխում է մասնավոր (քաղաքացիաիրավական) իրավահարաբերությունից, թիվ ՎԴ/1625/05/21 գործը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ՎԴ/1625/05/21 գործն ըստ հայցի Ռուբեն Հայրապետյանի՝ ընդդեմ ՀՀ Կառավարության՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի ընտրության արդյունքները հաստատելու մասին ՀՀ Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 2131-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ